

ԹԱՐԳՄԱՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

**ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅԱՆ ՈՐԱԿԻ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ.  
ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ՄԵԹՈԴՆԵՐԻ, ՄՈԴԵԼՆԵՐԻ ԵՎ  
ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻ ՈՐՈՆՄԱՆ ԽՆԴԻՐԸ**

**Աննա Հակոբյան**

*Երևանի պետական համալսարան*

Հոդվածում քննարկվում են այսօր գոյություն ունեցող թարգմանության որակի գնահատման հիմնական մոտեցումները: Այդ նպատակով ուսումնասիրվել են թարգմանական որակի վերաբերյալ առկա տեսական և գործնական մոդելների համակարգերը: Չնայած տեսական մոդելների նկատմամբ գործնական մոդելների բացահայտ առավելությանը՝ որակի գնահատման հարցում թարգմանությունների որակի գնահատման չափանիշների ընտրության խնդրի հետ կապված մի շարք հարցեր կան, որոնց պարզաբանումն էլ սույն հոդվածի նպատակն է:

**Բանալի բառեր.** թարգմանության որակի գնահատում, թարգմանության որակի մոդել, թարգմանության գնահատման չափանիշներ, թարգմանաքննադատություն, թարգմանության գնահատման նորմերը:

### **Ներածություն**

Այն, որ թարգմանությունը պետք է դառնա և՛ գիտություն, և՛ արվեստ, ինչպես կարծում էին ռոմանտիկ քննադատները, իրականացել է. սա է նրա արդի ճակատագիրը: Դա նշանակում է նախևառաջ հայտնվել, բացահայտվել, սահմանվել: Այդ մտորումներն արտահայտվում են թարգմանության տեսաբանների, թարգմանիչների և տեսաբան թարգմանիչների բախումներում՝ փաստորեն շարունակվելով մինչև այսօր: Առաջին դեպքում թարգմանիչների մեծամասնությունը հայտարարում է, որ թարգմանությունը ներըմբռնողական գործունեություն է: Երկրորդ դեպքում հակասություն կա պրակտիկայից հեռու կանգնած տեսաբանների և տեսությունից հեռու գտնվող թարգմանիչների միջև: Ի վերջո, խնդրո առարկան թարգմանաբանության գոյության առկայացումն է, որը կլինի միաժամանակ և՛ տեսական, և՛ պրակտիկ գործունեության դաշտ և որը մշակցած կլինի փորձով (Berman 1984:279):

Ինչպե՞ս գնահատել գրական թարգմանությունը: Գրական թարգմանության գնահատումը կարող է խուսափել է քննադատության սուբյեկտիվությունից: Մի կողմից գրական տեքստը ըստ էության առաջ է բերում ընթերցանության, վերարտադրության անվերջություն, մյուս կողմից քննադատությունը, նաև ընթերցողը ինքը, հանձնառու չէ մեկնության գործունեության մեջ: Սակայն մենք հավատում ենք, որ հնարավոր է վերլուծել տեքստերը օբյեկտիվորեն. թարգմանությունը ի գորու է թափանցիկ դարձնել որոշ լեզվաբանական, ոճաբանական երևույթներ:

### **Թարգմանաքննադատություն**

Ինչպե՞ս գնահատել թարգմանված տեքստը, եթե այն «հաջողված» է և ամբողջական, ինչպե՞ս գրական թարգմանվածքը ենթարկել գիտափորձարկման: Գրական տեքստը կարող է քննվել որպես գեղարվեստական ստեղծագործություն: Բացի դրանից, թարգմանաքննադատությունը ստեղծվում է ընթերցողներով և անհրաժեշտաբար դրվում է քննարկման: Պետք է քննել ոչ միայն աղբյուր տեքստը, նրա ժանրը՝ պատմական, սոցիալական, մշակութային, արդի գեղագիտության համատեքստում, այլև թարգմանչին: Նրան պետք է դիտարկել թե՛ անձնական տեսակետից և թե՛ կապված իր թարգմանվածքի հետ: Բայց ի՞նչ պրիզմայի միջով:

Մեշոնիկը, օրինակ, առաջարկում է բանաստեղծական սկզբունքը, որը «բնորոշվում է իր սեփական համապատասխանությամբ [...], նշյալը ոչ նշյալով և ոչ նշյալը նշյալով, բանադարձումը ոչ բանադարձումով և ոչ բանադարձումը բանադարձումով հարաբերությամբ» (Meschonnic 1993:315): Ըստ նրա՝ քննադատը և թարգմանիչը պետք է առաջնորդվեն տաղաչափական ռիթմով, շրթայացումներով և շարքերով, որպեսզի հասնեն լեզվաբանական կառուցվածքին, ճարտասանական կազմակերպվածությանը և, իվերջո, տեքստի բանաստեղծականությանը: Լավ թարգմանության գնահատման չափանիշները Մեշոնիկի մոտ թարգմանչի հանձնառությունն է, տեքստային գործառույթը (Meschonnic 1993:316):

Անտուան Բերմանի քննադատությունը հենվում է հետևյալ կանխադրույթի վրա. քննադատությունը գոյաբանորեն կապված է ստեղծագործության հետ: Նրա մեթոդում բնագրի նշանակյալ հատվածների ընտրությունը հառնում է մեկնողական աշխատանքից, որը և՛ վերլուծության համար, և՛ թարգմանչի համար սահմանում է հնարավոր ազատագրված տարածքը: Նման դիրքորոշումը

նրան թույլ է տալիս հաշվի առնել թարգմանիչների ընտրությունը, այդ փոխ-  
զիջումը արդյունք է թարգմանվելիք սյուժեի պատմական, սոցիալական, գրա-  
կան, գաղափարական դիսկուրսի ազդեցությանը: Լավ թարգմանության գնա-  
հատման չափանիշները ուրեմն, ըստ Բերմանի, կլինեն բանաստեղծական և  
բարոյագիտական (Berman 2002:188):

Ֆոլկների համար միայն խիստ կոնցեպտուալ կառուցվածքը կարող է թույլ  
տալ թարգմանչին հիմնել իր պոետիկան, որպեսզի ցուցադրի մեխանիզմները  
և ցուցադրական կառուցվածքները: Այն կլինի իր թարգմանության ինվա-  
րիանտը: Այդ վերլուծությունը հիմնվում է ենթատեքստերի սխեմաների, փաս-  
տարկների, տվյալների մուտքագրման վրա, ասույթի գաղափարական, բա-  
ռային, թեմատիկ և մշակութային ենթադրելի կառուցվածքների վրա (Faulkner  
1969):

Ոմանք կարծում են, թե թարգմանաքննադատությունը պետք է իր ուշադ-  
րությունը կենտրոնացնի ստեղծագործության բացասական հատկանիշների  
վրա : Բայց արդի մոտեցումն այն է, որ քննադատությունը պետք է հետազոտի  
նաև գործի դրական ասպեկտները: Թարգմանաքննադատության նպատակ-  
ներից մեկն էլ հենց ավելի զգայունացնելն է թարգմանությանը տրված վայել-  
չությունը և քննել, թե թարգմանիչը ունի՞ նպատակ կամ հասե՞լ է իր նպատա-  
կին:

Պրոֆեսիոնալ թարգմանիչները և նաև նրանք, ովքեր պարտավորվում են  
նվիրվել գրական թարգմանությանը, անխուսափելիորեն բախվել են որակի  
խնդրին: Թարգմանաքննադատությունը բազմաթիվ առկախ խնդիրներ ունի,  
ինչպես օրինակ թարգմանությունների գնահատման պրակտիկան, գնահատ-  
ման չափանիշները, որոնցից յուրաքանչյուրն արժանի է մանրամասն ուսում-  
նասիրության:

Գրական տեքստը կարող է ուսումնասիրվել իբրև թարգմանություն ոչ  
միայն դատողություններ անելու համար, այլև հասկանալու՝ որտեղ է տեղա-  
կայված տեքստը իր բնագրի համեմատ: Համեմատվում են նույն բնագիր  
տեքստի տարբեր թարգմանությունները, ինչպես նաև այդ նույն տեքստի այլ  
լեզուներով թարգմանված տարբերակները, այնուհետև քննությունների արդ-  
յունքներից յուրաքանչյուր թարգմանության համար կազմվում է վարկած: Եվ  
սա էլ կլինի թարգմանության գնահատման չափանիշներից մեկը:

Այս բնագավառի այնպիսի ազդեցիկ հեղինակ, ինչպիսին է Անտուան Բեր-  
մանը, հավաստել է, որ թարգմանության քննադատման բազմաթիվ մեթոդներ  
206

կարող են լինել, քանզի գոյություն ունեն թարգմանության բազմաթիվ տեսություններ: Հետևաբար նա ստեղծել է վերլուծության իր սեփական մոդելը, որը կարող է հարմարեցվել և կիրառվել ցանկացած տիպի կադասարված տեքստի դեպքում: Նա պնդում է, որ յուրաքանչյուր թարգմանիչ պետք է նախ և առաջ մշակի թարգմանության նախագիծ, նախքան բուն թարգմանությանն անցնելը (Berman 2002:188):

Թեպետ թարգմանությունների քննադատությունը լուրջ բանավեճերի առարկա է, այսուհանդերձ, պետք է ընդունել, որ այն անհրաժեշտ է: Օրինակ, ինչպես նշում է Գիդեոն Տուրին, թուրքական գրական համակարգը մեծապես հարստացել է տարբեր լեզուներից կատարված թարգմանությունների շնորհիվ, և թարգմանական ակտիվ գործունեությունը արժևորվել է թարգմանիչների և քննադատների կողմից (Toury 1991:89): Թարգմանական ուսումնասիրությունների համար Տուրին առաջարկել է իր մշակած մեթոդաբանությունը. գիտնականները, ովքեր աշխատում են այս մոդելի վրա, հաստատում են, որ թարգմանությունները պետք է նկարագրվեն ըստ թիրախ լեզվի նորմերի, ուրոնք գործում են որոշակի պահի և ճշգրիտ տեղում և համեմատված են բնագիրների հետ, որպեսզի ստեղծեն օբյեկտիվ թարգմանաքննադատություն և պաշտպանվեն թարգմանական տեսություններից (Toury 1991:198):

#### **Կ. Ռայսի թարգմանական հասկացույթը**

Պարզ է, որ քննադատությունը, որ ցանկանում ենք հիմնել՝ առաջադրելով առանձնահատուկ և սահմանափակ պարտավորություններ, շրջանակելով նրան օբյեկտիվության երաշխիքներով, նպատակ չունի ճգնաժամի մեջ գցել թարգմանության արդյունքը կամ տրոհելու այն: Մեր նպատակն է ստեղծել գնահատման նորմավորված աստիճանակարգ (Reiss 2009:40):

Դատե՞լ, արժևորե՞լ, քննադատե՞լ... Պարզ է, որ քննադատությունը, որ ուզում ենք հիմնել և սահմանել նրա առանձնահատուկ պարտականությունները, սահմանափակված օբյեկտիվության երաշխիքներով, ամենևին ճգնաժամի մեջ գցելը չէ, ոչ էլ անգամ թարգմանական արտադրանքների տարբերակումը, այլ գնահատման աստիճանակարգի, նորմավորված դատողությունների ստեղծումը: Նման քննադատության նպատակն է լինել գործնական, կառուցողական, անգամ օգտակար: Ոչ մի ընդհանրություն Անրի Մեշոնիկի ոչնչացնող քննադատությունների հետ, Ռայսը ուզում է ոչ միայն կարգավորել անհրաժեշտ գործունեությունը, այլև հիմնել թարգմանաքննադատություն, այն

տեղադրել տեքստերի վերաբերյալ մտածողության և արտահայտման տարածքում, որովհետև թարգմանությունների քննադատությունը բացակայում է ամենուրեք, հատկապես գրական մամուլում: Արհեստավարժ միջավայրում՝ լեզվաբանական համալսարաններում, թարգմանական դպրոցներում, հրատարակչություններում, քննադատության դերն այնքան է սահմանակարգված, որ, ըստ Կ. Ռայսի, թարգմանությունների քննադատությունը ողբալի վիճակում է օբյեկտիվ չափանիշների բացակայության պատճառով: Այսօր մենք բախվում ենք նույն առարկություններին՝ բոլորովին հաշվի չառնելով ասույթի կարգավիճակը բնօրինակի լեզվում կամ գեղագիտության ռեալիզմը ընդհանրապես, և կամ տվյալ հեղինակին մասնավորապես:

Հետագայում Կ. Ռայսի թարգմանական հարասույթը զարգանում է իր մյուս աշխատություններում: Թարգմանության համապատասխանությունը բնագրի հետ, այն «ներլեզվական հրահանգների հետ», որոնք սկզբում քննարկվում էին գործառույթային հայեցակետում, այսօր ավելի են հետ մղվում՝ անկարող լինելով սահմանել «թարգմանություն» հասկացությունն իր ամբողջության մեջ: Թարգմանության գնահատման գլխավոր և փաստորեն միակ չափանիշը հայտարարվում է նրա համապատասխանությունը այն նպատակին, հանուն որի այն իրագործվել է:

Թարգմանության նպատակները կարող են լինել շատ տարբեր, և դրանց համապատասխանող տեքստերը սկզբունքորեն կտարբերվեն մեկը մյուսից: Եվ էական չէ, թե որ տեսանկյունից թարգմանությունը մոտ կլինի բնագրին, եթե այն համապատասխանում է իր առջև դրված նպատակին: Իր առջև դրված խնդրից ելնելով՝ թարգմանիչը ընտրում է թարգմանության մեթոդը, վերարտադրել բնագիրը, շեղվել բնագրից, թե՞ մոտենալ դրան: Թարգմանիչը հանդես է գալիս միջնորդի դերում՝ որպես լեզվի խորհրդատու, մասնագետ, այդ երկրի լեզվին, մշակույթին, պատմությանը քաջատեղյակ մարդ, որն անհրաժեշտ է նպատակին հասնելու համար: Այսպիսով, թարգմանիչը դառնում է կենտրոնական դեմք միջլեզվական հաղորդակցություններում:

Նման մոտեցման դեպքում Ռայսն առաջարկում է մտցնել «համագոր» (ադեկվատ) և «համարժեք» (եկվիվալենտ) հասկացությունները: «Համարժեք» թարգմանությունն այն թարգմանությունն է, որը համապատասխանում է առաջադրված նպատակին: Համարժեքության ապահովման ձգտումը որոշում է թարգմանության մեթոդի ընտրությունը, և այդ պատճառով էլ համարժեքու-

յունը վերաբերում է թարգմանության գործընթացին, որը կարող է իրագործվել համարժեք եղանակով:

Համագործությունը վերաբերում է թարգմանության արդյունքին է և նշանակում է թարգմանական տեքստի գործառությանին համապատասխանությունը բնագրի տեքստի հետ: Այդ պատճառով թարգմանությունը չի կարող իրագործվել համագործության եղանակով, բայց կարող է լինել համագործորպես մասնավոր դեպք որոշակի նպատակի հասնելու համար:

Հենց սկզբից Կ. Ռայսը ցույց է տալիս, որ գեղարվեստական թարգմանության գնահատումը առանց բնագրի հետ զուգադրական քննության գուրկ է օբյեկտիվ չափանիշներից և կարող է տալ միայն սահմանափակ արդյունք՝ թարգմանության մեջ միայն բացահայտ սխալները հայտնաբերելով: Նրա կարծիքով՝ թարգմանության որակի վերջնական գնահատականը կարող է տալ միայն բնագրի հետ համադրությունը՝ առաջին հերթին որոշելով, թե բնագիրը ի՞նչ տիպի տեքստ է, որովհետև հենց դա է հիմնականում պայմանավորում թարգմանության մեթոդը:

Մի դատական տեսարան է ստացվում, քննության նման մի բան, որովհետև թարգմանության քննադատությունը պետք է ինքը նույնպես քննադատված և ինքնաքննադատված լինի, յուրաքանչյուրն օգուտ քաղելով այդ վարժանքից: Այս տողերից բխում է, որ յուրաքանչյուր բացասական քննադատություն պետք է համապատասխանեցվի՝ նախադատությունից բխեցնելով լավագույն լուծումը:

Թարգմանված տեքստի և մեկնության միջև համեմատությունը թույլ է տալիս առաջին տարբերակումը դնել քննադատության երկու բևեռների միջև, կախված այն բանից, թե որքանով է այն ազդում թիրախ լեզվի կամ աղբյուր տեքստի վրա, որոնցից յուրաքանչյուրը, իհարկե, ինքնուրույն անբավարար են իրենք իրենց: Այդ կապակցությամբ երևան են գալիս գեղագիտական կանոններ և տեքստերի ստորակարգայնացում, որոնք այսօր կարող են մեզ բավականին զարմանալի թվալ. օրինակի համար, հանրամատչելի գրականությունը կարող է գնահատվել որպես վատ ձևավորված գրականություն:

Իսկական քննադատությունը կանոնակարգված քննադատությունն է, որը պահանջում է տեքստերի ընդհանուր տիպաբանություն: «Պետք է, անշուշտ, որ տեքստի բնորոշումը հիմնված լինի թարգմանվող տեքստի կոնկրետ օրինակի վրա, որ այդ տեքստը պատկանի որոշակի տիպի, որին համապատասխանում է թարգմանությամբ պայմանավորված մեթոդ, որի հիմնական նպատակն է

տակն է տեքստի վերարտադրությունը» (Reiss 2009:45): Կ. Ռայսը գալիս է այն եզրակացության, որ գոյություն ունեցող թարգմանությունների դասակարգումները աչքի չեն ընկնում անհրաժեշտ հետևողականությամբ և չեն արտացոլում թարգմանության կիրառման մեթոդների միջև եղած էական տարբերությունները (Reiss 2009:50): Նա համարում է, որ կա տեքստի երեք հիմնական տիպ: Տեքստի առաջին տիպում միշտ առաջին պլանում է նկարագրման գործառույթը՝ հաղորդագրության փոխանցումը, հաջորդ տիպի տեքստում հիմնական դերը պատկանում է արտահայտման գործառույթին (հուզական կամ գեղագիտական զգացումներին), և վերջապես, երրորդ տիպի տեքստում գերիշխում է դիմումի գործառույթը (կոչ գործելուն կամ անդրադարձին): Այս երեք տիպի տեքստերը, որոնք առանձնացվել են լեզվի գործառույթի հիմքով, կարող են լրացվել չորրորդ խմբի տեքստերով, որոնց տարբերությունը պայմանավորում է թարգմանության ընթացքում կիրառվող մեթոդը՝ որոշելով թարգմանության քննադատական գնահատականը: Այս չորս տիպի տեքստերի տարբերությունը պայմանավորում է մեթոդը, որ կիրառվում է թարգմանության ժամանակ:

Հենց այստեղ առաջ է գալիս գրական թարգմանության գնահատման խնդիրը:

Գրական թարգմանությունների ազատությունը մեզանում ընդունվում է և՛ դրական, և՛ բացասական իմաստով: Գրական, եթե անհատական մոտեցմամբ աղճատված չէ բնագրի ոճը, գեղարվեստական ամբողջականությունը: Բացասական, եթե մտցված են հեղինակի ոճին և ստեղծագործությանը անհարիր օտար պատկերներ, երանգավորումներ: Գնահատման ժամանակ պետք է պարզել, թե ինչ գործառույթ է կատարում ազատությունը: Սրանից է կախված թարգմանության գնահատականը: Իհարկե, դեռևս գոյություն չունեն բացարձակ ճշգրիտ չափանիշներ, որոնցով հնարավոր լիներ հստակ սահման դնել ազատության և անթույլատրելիության միջև: Այսուհանդերձ, կարող ենք սահմանել, որ եթե ազատությունը թելադրված չէ ստեղծագործության գեղարվեստականությունն ապահովելու անհրաժեշտությամբ, եթե այն հակասում է բնագրի ընդհանուր ոգուն և հեղինակի ոճին, վերածվում է կամայականության: Իսկ եթե շեղումը չի աղավաղում, այլ ուժգնություն, թափ է հաղորդում բանաստեղծությանը՝ սրելով որոշակի գծեր, հավատարիմ մնալով բնագրի ընդհանուր ոգուն և հեղինակի ոճին, պետք է ստանա դրական գնահատական:



Հաճախ գրական ստեղծագործությունը համարվում է անթարգմանելի այն պատրվակով, որ անհնարին է ստեղծել դրա ճշգրիտ կրկնակը, վերարտադրել այն՝ պահպանելով նրա սկզբնական ընտրանիի ողջ բարդությունն ու բազմամասնությունը: Ընդունել նման դատողության ճշմարտացիությունը, նշանակում է ոչ միայն դատապարտվել անկարողության, այլև մոռանալ, որ թարգմանությունը հիմնվում է թե նույնի, թե մյուսի դիալեկտիկայի վրա: Այս տեսակետից Ժընետն իրավացի է, որ գրական թարգմանիչն անում է միշտ ուրիշ բան, քանի որ գոյություն ունի բառի փոփոխություն, տեղափոխություն, շեղում, այլ կերպ ասած՝ տեքստի հարմարեցում: Չնայած հարմարեցում եզրույթը կարող է թվալ չափազանցված և մասնագիտական էթիկային հակասող, այսուհանդերձ, սա ամենահարմարն է՝ ներկայացնելու համար թարգմանական գործընթացն իր հնարավոր իմաստների բազմազանությամբ, որոնք բոլորը այս կամ այն կերպ բնորոշում են գրական թարգմանչի գործելակերպը և նրա սահմանները, նրա ազատության չափը: «Յուրաքանչյուր թարգմանություն հարմարեցում է՝ լավ կամ վատ, և այդ հարմարեցումը նույնքան արդյունք է հակասականության, որքան ազատության հաստատումը», հավաստում է Ֆորտունատո Իսրայելը (1999:31):

Թարգմանչի նպատակը թարգմանական համարժեքության հասնելն է, այսինքն՝ թարգմանության տեքստում այնպիսի տեքստի ստեղծումը, որը կլինի բնագիր տեքստի հաղորդակցական նմանակը: Թարգմանության տեքստը պետք է օժտված լինի այնպիսի հատկանիշներով, որոնք նրան թույլ կտան թարգմանության լեզվով խոսողների վրա թողնել նույնպիսի հաղորդակցական ներգործություն, ինչպիսին բնագիրը՝ իր լեզվով խոսողների վրա: Հաղորդակցական ներգործությունը պայմանավորված է տեքստի հատկանիշներով, ինչպես նաև լեզվական և արտալեզվական այն պայմանների ամբողջությամբ, որոնցում գործում է տեքստը: Արտալեզվական պայմանները կամ արտալեզվական իրադրությունը հաղորդակցության իրականացման սոցիալական, կենցաղային, պատմական և այլ պայմաններն են, որոնք պետք է հաշվի առնվեն թարգմանության ժամանակ: Բնագրի արտաքին կապերի ուսումնասիրությունը կենսականորեն անհրաժեշտ է թարգմանության իրագործման համար: Նույնիսկ ամենախորը ներթափանցումը տեքստի կառուցվածքի մեջ ոչնչով չի օգնի թարգմանչին այնտեղ, որտեղ հեղինակը հղում է անում պատմական կամ հասարակական իրադարձություններին: Նման դեպքերում հեղինակն ընթերցողի միտքն ուղղում է ոչ թե ստեղծագործության խորքը, այլ, ընդ-

հակառակը, տանում է հեռու՝ դեպի հասարակական կյանքի հիշատակված իրադարձությունը: Թարգմանիչը չի կարող և չպետք է մերժի իր դարաշրջանի ընկալումը, սակայն նա պետք է հաշվի առնի նաև, թե ինչպես է այդ ստեղծագործությունն ընկալվել իր ծննդյան պահին (Комиссаров 1973:31): «Թարգմանության տեքստը վերագրվում է բնագրի հեղինակին և օգտագործվում է այնպես, կարծես թե հենց դա է բնագիրը: Մասնավորապես, թարգմանությունը մեջբերվում է որպես հեղինակի խոսք», նշում է Կոմիսարովը (1973:31):

Թարգմանությունը որակելով որպես սոցիոմշակութային գործունեություն, որ գործում է ըստ նորմաների և որպես վճիռներ ընդունող գործընթաց՝ Գ. Տուրին առաջադրում է սկզբունքներ, որոնք թույլ են տալիս վերակառուցել այդ գործընթացը և ձևակերպել վարկածներ լեզվաբանական, տեքստային և մեթոդաբանական հարկադրանքների վերաբերյալ, որոնց ազդեցության տակ ընդունվել են այդ վճիռները: Այդ անելու համար նա առաջարկում է թարգմանությունը մասնատել համեմատության միավորների և կցորդել այդ միավորները համապատասխան հատվածին՝ աղբյուր տեքստում: Տեքստի հատվածներում դիտվող ընդհանուր կողմնորոշումը թույլ կտա թարգմանության կողմնորոշումը հաստատել իր ամբողջության մեջ:

Ինչ վերաբերում է համարժեքության հասկացությանը, այն չպետք է ընկալվի որպես հարաբերություն աղբյուր տեքստի և թիրախ լեզվի միջև, ինչը կարգադրում է, որ թարգմանությունը պետք է լինի կամ չլինի: Տուրինի ընկալմամբ համարժեքությունը նպաստում է, որպեսզի որոշվի ինչն է հավասարագոր և ինչը՝ ոչ ընդունիչ մշակույթի լեզվաբանական և տեքստուալ ավանդույթում: Թարգմանաբանության տեսական ճյուղի պարտքն է սկզբունքներ մատակարարել, որոնք թույլ են տալիս տարբերակել թարգմանության ձևերը՝ տվյալ մշակույթին համապատասխանեցված կամ չհամապատասխանեցված (Toury 1991:54):

### **Եզրակացություն**

Այսպիսով, պետք է ընդունել, որ Ռ-այսի ուսումնասիրությունը անվիճելի ներդրում է ժամանակակից թարգմանաբանության մեջ: Այն նոր ուղղություն է բացում թարգմանաբանության մեջ, ընդգրկում թարգմանչի կատարած գործառնությունների ամբողջությունը, թարգմանչական գործունեության տարբեր նպատակների նկարագրությունը, ընդգծում թարգմանչի աշխատանքի

կարևորությունը: Այն հիմք է դառնում գնահատելու թարգմանությունը, մշակելու թարգմանության գնահատման չափանիշները, ընդգծելու թարգմանական ազատության և ստեղծարարության սահմանները:

Անգամ, եթե թարգմանիչը՝ կարծելով, թե իր «անձնական» և կամավոր գործն է անում, երևայական հարթության վրա է դնում թարգմանությունը, այսպիսով էլ ավելի կախված լինելով սոցիոլոգիական ինքնաբերաբար գործող առյուծներից, երբեմն ո՛չ իր «ես եմ»-ը, ո՛չ իմ «գիտաբանությունը» չեն կարողանում պատենշել թարգմանվող նյութը, որի ազատությունը չգիտակցված է:

Գրական թարգմանիչն անպայման պետք է ազատ լինի, ավելի ազատ, քան իր գործընկերները: Սակայն նա պետք է ենթարկվի որոշ կանոնների, որպեսզի կարողանա ապահովել երկու տեքստերի համընկնումը: Մենք ավելի հակված ենք ընդունելու Ա. Նազարյանի տեսակետը. «Հարմարեցումը թարգմանական հնար է, երբ անհայտ (կամ քիչ հայտնի) մի բան փոխարինվում է հայտնի (կամ ավելի հայտնի) մի բանով, անսովորը (թարգմանող լեզուն կրողների համար) սովորականով» (Նազարյան 2000:66):

## ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Նազարյան, Ա.; Բաղդասարյան, Հ. (2000) *Թարգմանաբանական ուսումնական ձեռնարկ*, Եր.: «Ամարաս»:
2. Berman, A. (2002) *L'Âge de la traduction. La tâche de Walter Benjamin*. Vincennes: Presses Universitaires de Vincennes, "Intempestives".
3. Faulkner, W. (1969) *Essais, discours et lettres ouvertes*. Paris: Gallimard.
4. Israël, F. (1990) *Traduction littéraire et théorie du sens, Études traductologiques*. Paris: Minard Lettres Modernes.
5. Meschonnic, H. (1973) *Pour la poétique III, Une parole écriture*. Paris: Gallimard.
6. Reiss, K. (2009) *Problématiques de la traduction*. Paris: Economica, "Anthropos".
7. Toury, G. (1991) *Introducing Translation Theory: Selected Articles*. Tel Aviv: Dyonun.

## **Translation Quality Control: a Search for Effective Methods, Standards and Parameters**

This article examines the key approaches towards the assessment of translation quality adopted up to date. Formally, they may be divided into two types: theoretical and practical (quantitative) models. Quantitative models have an advantage over theoretical ones in evaluation practice, but they also leave many controversial issues associated mainly with the selection of parameters of translation quality unsolved. Therefore, a new break-through approach to the problem capable of eliminating these difficulties is sought for.

### **Оценка качества перевода: проблема поиска эффективных методов, стандартов и параметров**

В статье рассматриваются основные подходы к оценке качества перевода, существующие на сегодняшний день. Формально их можно разделить на теоретические и практические (количественные) модели. Несмотря на явное преимущество вторых перед первыми при вынесении конкретного суждения о качестве перевода, количественные системы также оставляют много неразрешенных вопросов, связанных, в первую очередь, с отбором параметров оценки переводов, и нуждаются в качественно новом подходе для их разрешения.